

ՀԱՅ ԱԻԵՏԱՐԱՆԱԿԱՆ ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ՎԱՐԺԱՐԱՆ

Երկրորդական բաժինի 10-րդ դասարան

2015 – 2016 տարեշրջան

Հայոց պատմության դասանիթերու բովանդակության պատկեր

Դասագիրք՝ «Հայոց Պատմութիւն»

Հեղինակ՝ Հրանդ Փաստրմաճեան

Ուսուցչուհի՝ Անի Պիլալեան

<u>Բովանդակութիւն</u>	<u>Դասաւանդման նպատակակէտեր</u>
<p>ՀԱՅԱՍՏԱՆ ԹՈՒՐԱՆԱԿԱՆ ՏԻՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՏԱԿ</p> <p>Սելճուք թուրքերու Արշաւանքը</p>	<p>-Բացատրել Ժ. դարու վերջը Սելճուք թուրքերը Հայաստանի դուռներուն առջեւ երեւցան:</p> <p>Գիտնալ՝</p> <p>-1064-ին սելճուք թուրքերը գրաւեցին Անին:</p> <p>-1074-ին սելճուքները բնաջնջեցին բիզանդական բանակը:</p> <p>-Կը կորսուի յունական Փոքր Ասիան:</p> <p>-Արձանագրել որ ներկայ թուրք բնակչութիւնը իրականին մէջ կը ներկայացնէ միաձուլումը ներխուժող թուրանեան ցեղերուն եւ Փոքր Ասիոյ բնիկ ժողովուրդին:</p>
<p>Մոնկոլեան Արշաւանքները</p>	<p>-Գիտնալ որ մինչեւ ԺԳ. Դարու սկիզբը Հայաստան մնաց սելճուք թուրքերու լուծին տակ:</p>

<p>Հայկական Առաջին Մեծ Արտագաղթը</p> <p>Օսմանցի թուրքերը Եւ Օսմանեան Կայսրութեան Ստեղծումը</p> <p>Հայաստան Օսմանեան թուրքերու Տիրապետութեան Տակ</p> <p>Ղարաբաղի Հայ Իշխանապետութիւնները</p> <p>Զինուորական Երեւոյթներ</p>	<p>-Ընդգծել որ շատ չանցած Հայաստան պիտի կրէր թուրանական նոր արշաւանքի մը սարսափները: Արշաւողներն էին այս անգամ մոնկոլները Ճենկիզ Խանի ղեկավարութեամբ:</p> <p>-Բացատրել հայկական առաջին մեծ արտագաղթին դրդապատճառները.</p> <p>· Անիի անկումը ԺԱ. դարուն .</p> <p>· ԺԳ. Դարուն Մոնկոլական արշաւանքը:</p> <p>Գիտնալ որ`</p> <p>-Օսմանցի թուրքերը ԺԳ. դարուն գաղթեցին դէպի Փոքր Ասիա:</p> <p>-Նշել որ օսմանցի թուրքերը իրենց կորովով, կարգապահութեան ոգիով, ինչպէս նաեւ կազմակերպչական որոշ յատկութիւններով ամենէն նշանաւորը հանդիսացան թուրանական ժողովուրդներուն:</p> <p>-Յիշատակել որ Մոհամմէտ Բ. գրաւեց Պոլիսը 1453 Մայիս 29-ին:</p> <p>-Գիտնալ որ ԺԶ. դարէն սկսեալ Հայաստանի մեծագոյն մասը ինկաւ օսմանցի թուրքերու տիրապետութեան ներքեւ:</p> <p>-Բացատրել որ օսմանցի թուրքերը ունէին ամենազօր սուլթան մը, կեդրոնական զօրեղ իշխանութիւն մը եւ Բիւզանդիոնի օրինակէն ներշնչուած վարչական մեքենայ մը:</p> <p>-Գիտնալ որ այս վարչակարգը հիմնուած էր քրիստոնէայ հպատակներու ստրկութեան վրայ:</p> <p>-Թուել հինգ մելիքութիւնները` Գիւլիստան, Զրաբերդ, Խաչէն, Վարանդա եւ Դիզակ:</p> <p>-Ճանչնալ ազգային հերոս Դաւիթ բէկը:</p>
---	--

<p>ՀԱՅԿԱԿԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ</p> <p>Հայ Եկեղեցին Եւ Իր Դերը</p> <p>Մխիթարեանները</p> <p>Հայերը Եւ Տպագրութիւնը</p> <p>Մշակութային Գործը</p> <p>Գրական Շարժումը</p> <p>Հայ Մամուլի Ծնունդը Ու Տարածումը</p>	<p>-Ճանչնալ հայ եկեղեցւոյ դերը ԺԹ. դարուն: Բազմաթիւ դարեր քաղաքական կեանքէ զուրկ հայ ազգին համար, հայ եկեղեցին ի յայտ եկաւ իբրեւ կազմակերպումի եւ պահպանումի սքանչելի միջոց մը:</p> <p>-Գիտնալ որ Մխիթար հայ վանականը Վենետիկի մէջ հիմնեց Մխիթարեան միաբանութիւնն ու վանքը:</p> <p>-Թուել միաբանութեան հիմնադիրին մտադրումը՝</p> <p>-արեւմտեան գրականութեան լաւագոյն գործերու թարգմանութիւն:</p> <p>-ստեղծել կրթական շարժում մը, համաձայն եւրոպական լաւագոյն մեթոտներու եւ պատշաճեցուած ազգային կարիքներուն եւ ոգիին:</p> <p>-Հաստատել որ հայերը տպագրութեան գիտը օգտագործող առաջին ժողովուրդներէն մէկը եղան: Հայկական առաջին գիրքերը տպագրուեցան Վենետիկ 1512-ին:</p> <p>-Հայկական առաջին իսկական տպարանը հաստատուեցաւ Վենետիկ 1565-ին:</p> <p>-Գիտնալ որ 1845-էն սկսեալ թաղային վարժարաններու ցանց մը տարածուեցաւ Թուրքիոյ հայկական նահանգներու մէջ:</p> <p>-Արձանագրել որ ԺԹ. դարը յատկանշուեցաւ նաեւ գրական մեծ շարժումով մը, որ ծնունդ տուաւ հայկական արդի գրականութեան: Երաժիշտներու, արուեստագէտներու եւ բանահաւաքներու նպաստը շատ մեծ եղած է ազգային շարժումին:</p> <p>-Բացատրել որ մամուլը ստանձնեց ոչ միայն տեղեկատու մարմնի մը դերը, այլեւ դարձաւ դաստիարակչական իսկական միջոց մը:</p>
---	---

<p>Հայոց Ազգային Զգացումը</p> <p>Խրիմեան Հայրիկ</p> <p>ԱՐԵՒԵԼԵԱՆ ՀԱՐՅԸ</p> <p>ՌՈՒՍԻԱ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄԷՋ</p> <p>Ռուս-Պարսկաստան Պատերազմները</p> <p>ԺԹ. Դարու Ռուս-Թրքական Պատերազմները</p>	<p>-Գիտնալ որ այս նախաձեռնություններու զուգադիպումը ծնունդ տուաւ շատ մը հայ մտաւորական կեդրոններու:</p> <p>-Թուել բուն Հայաստանի մէջ գոյութիւն ունեցող կեդրոնները՝ (Էջմիածին, Երեւան, Վան, Էրզրում եւ Շուշի):</p> <p>-Թուել Հայաստանէն դուրս, ամենակարեւոր կեդրոնները՝ (Պոլիս, Զմիւռնիա, Թիֆլիս, Մոսկուա, Վենետիկ):</p> <p>-Գիտնալ որ հայկական գիտակցութեան զարթօնքին հետ կապուած եզակի անուն մըն է Մկրտիչ Խրիմեան՝ Ամենայն հայոց կաթողիկոս եւ ժողովուրդի հայրիկը:</p> <p>-Հասկնալ Արեւելեան հարցին ծնունդը:</p> <p>-Գիտնալ որ ԺԸ դարուն, նախաձեռնութեամբ երկու վեհապետներու՝ Մեծն Պետրոսի եւ Կատարինէ Բ.-ի ստեղծուեցաւ արդի մեծ պետութիւն՝ Ռուսիան:</p> <p>-Անդրադառնալ որ Ռուսիոյ ասպարէզ գալը գլխաւոր պատճառը հանդիսացաւ օսմանեան թուրքերու շարունակական նահանջին:</p> <p>-Բացատրել որ Ռուսիա ԺԸ դարու վերջերուն եւ ԺԹ. դարու սկիզբը Իրանէն իլեց Վրաստանը, Ագրպէճանը եւ Արեւելեան Հայաստանը:</p> <p>-Ընդգծել որ 1813 Հոկտ. 24-ին Պարսկաստանը կը ստորագրէ Գիւլիստանի դաշնագիրը, որով ան կը հրաժարէր Վրաստանի վրայ ունեցած իր իրաւունքներէն եւ Ռուսիոյ կը ձգէր Ագրպէճանի հիւսիսային մասն ու Ղարաբաղը:</p> <p>-Գիտնալ ԺԹ. դարու ռուս-թրքական պատերազմի մասին (1828-1829):</p> <p>· Պատերազմը վերջացաւ ռուսական յաղթանակով: ·</p>
---	--

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑԸ

Սան Սթեֆանոյի Եւ Պերլինի Դաշնագիրները

-1829-ին ստորագրուեցաւ Ատրիանապոլսոյ հաշտութեան դաշնագիրը:

-Գիտնալ որ Սան Սթեֆանոյի դաշնագիրը ստորագրուեցաւ 1878 Մարտ 3-ին եւ ատով Ռուսիա իր կամքը պարտադրեց Թուրքիոյ:

-Մանրամասնել որ հայերու պնդումին վրայ, Ռուսիա ջանաց ապահովել անհրաժեշտ բարենորոգումներ Սան Սթեֆանոյի դաշնագրին 16-րդ յօդուածով: